ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ե-19

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «26» հունվարի 2022 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան, ի դեմս *ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սաղյանի* (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և *ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ ՊՈԱԿ-ը* (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն (ռեկտոր) *Աշոտ Մելքոնյանի*,, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), *««Հայոց պետականության հիմնախնդիրները հնագույն ժամանակներից մինչև 1918 թ.», «Հայաստանը և հայությունը նորագույն շրջանում: Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն», «Աղբյուրագիտություն և պատմագրություն»»* ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված *224.860.300 (երկու հարյուր քսանչորս միլիոն ութը հարյուր վաթսուն հազար երեք հարյուր)* ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, *այդ թվում՝ նպատակը*, օրացուցային պլանը, *այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները*, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված բանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է *224.860.300 (երկու հարյուր քսանչորս միլիոն ութը հարյուր վաթսուն հազար երեք հարյուր)* ՀՀ դրամ:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ ՊՈԱԿ
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24	ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4
Հ/հ 900011024115	Երևանի թիվ 1 տեղ. գանձ.բաժանմունք
	Հ/հ 900018005281
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Նախագահ՝ Ա. Սաղյան	Տնօրեն՝ Աշոտ Մելքոնյան
Կ. Տ.	Կ. Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝ Աշոտ Մելքոնյան

«26» 01 2022
Համաձայն N 1
N Ե-19 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սաղյան և Կազմակերպության տնօրեն Աշոտ Մելքոնյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «26» 01 2022 N Ե-19 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ *224.860.300 (երկու հարյուր քսանչորս միլիոն ութը հարյուր վաթսուն հազար երեք հարյուր)* ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ

Նախագահ՝ Ա. Սաղյան

Կազմակերպություն

Տնօրեն՝ Ա. Մելքոնյան

Հավելված N 2
«16» 01 2022
N Ե-19 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

««Հայոց պետականության հիմնախնդիրները հնագույն ժամանակներից մինչև 1918 թ.», «Հայաստանը և հայությունը նորագույն շրջանում: Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն», «Աղբյուրագիտություն և պատմագրություն»» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 20.. թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Մեր ժողովրդի պատմության հարցերի քննությունը մշտապես գտնվել է պատմաբանների ուշադրության կենտրոնում:

Պատմության ինստիտուտը հայոց պատմության տարբեր հարցերի ու ժամանակաշրջանների ուսումնասիրության վերաբերյալ իրականացրել է մեծ ծավալի աշխատանք: Այդ ուղղությամբ կատարված աշխատանքներն որքան էլ շոշափելի են, այնուամենայնիվ բավարար չեն, և շատ հիմնախնդիրներ նորովի ուսումնասիրման կարիք ունեն:

Ինստիտուտում կատարվում է նաև նախկինում անուշադրության մատնված թեմաների ուսումնասիրություն:

Հայոց պատմության զանազան հարցերին նվիրված պատկառելի ժառանգությունն անհրաժեշտ է ներկայումս ի մի բերել և գիտական հանրությանը ներկայացնել բաղաբական կապանքներից ազատված ու անաչառ գիտության դիրքերից:

Ծրագրի իրականացման արդյունքում լույս կտեսնեն հայոց պատմության տարբեր հիմնախնդիրներին նվիրված հոդվածներ, փաստաթղթերի ժողովածուներ, մենագրություններ, աղբյուրագիտական ժողովածուներ:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Խիստ անհրաժեշտ է ծրագրի կատարմանը մասնակից դարձնել երիտասարդ կադրերի, գիտական սերնդափոխություն իրականացնելու համար: Ուստի նպատակահարմար է գտնվում ծրագրի շրջանակներում հատկացնել ասպիրանտուրայի առնվազն 4 տեղ:

Աշխատանքն ավելի արդյունավետ իրականացնելու հիմնական դժվարությունն արտերկրի արխիվներից և գրադարաններից օգտվելն է: Անհրաժեշտ է նաև ինստիտուտի աշխատակիցներին հնարավորություն տալ ՀՀ արխիվներից փաստաթղթերի պատճենահանումը կատարել անվճար հիմունքներով, ինչպես նաև տրամադրել թվային տարբերակները:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Հայագիտության մեջ մեծ կարևորություն ունեցող այս ծրագրի կատարումը կիրականացվի հետևյալ թեմաներով

- Հայ ժողովրդի ձևավորումը և կազմավորումը Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներում
- Հայոց հին պետականությունների պատմություն (մ.թ.ա հնագույն ժամանակներից մինչև 4-րդ դար)
- Հայոց միջնադարյան պետականությունների պատմություն

- Հայ ազատագրական պայքարը հին և միջնադարյան Հայաստանում
- Ազատագրական պայքարը և Հայ Առաքելական եկեղեցին
- Հայոց պետականությունը և Հայ Առաքելական եկեղեցին
- Հայ ազգային-ազատագրական շարժումները 17- 20-րդ դարի սկզբին
- Հայկական հարցը և հայերի զեղասպանությունն Օսմանյան կայսրությունում 1878-1923 թթ.
- Հայ քաղաքական կուսակցությունների պատմություն (19-րդ դարի վերջ-20-րդ դարի սկիզբ)
- Կիլիկիահայության պատմության հիմնահարցեր
- Հայաստանի առաջին Հանրապետության պատմություն (1918-1920 թթ.)
- Խորհրդային Հայաստանի պատմություն (1920-1991թթ.)
- Հայ ժողովրդի մասնակցությունը 2-րդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներին (1939-1945թթ.)
- Հայ գաղթավայրերի և Հայկական սփյուռքի հիմնախնդիրներ
- Հայ հասարակական մտքի և հայ պարբերական մամուլի պատմություն
- Հայաստանի երրորդ Հանրապետություն պատմություն
- Արցախյան ազգային-ազատագրական պայքարի և ԼՂՀ կազմավորման պատմություն
- Հայոց զինուժի, հայկական բանակի պատմություն
- Ժողովրդագրական գործընթացների ուսուցումնասիրություն

Հայոց աղբյուրագիտություն և պատմագրություն

5. Ակնկալվող արդյունքները. Web of Science, Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում գիտական հոդված, Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական հրապարակում, գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում:

Կազմակերպության տնօրեն՝ _____ Ա. Մելքոնյան

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ Ա. Մելքոնյան

Հավելված N 3
«26» 01 2022
N Ե-19 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՊԼԱՆ*

««Հայոց պետականության հիմնախնդիրները հնագույն ժամանակներից մինչև 1918 թ.», «Հայաստանը և հայությունը նորագույն շրջանում: Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն», «Աղբյուրագիտություն և պատմագրություն»» ծրագրի

հ/հ	անվանումը	Իրականացվելիք միջոցառման				պահանջվող գումարը (հազար դրամ)
		համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները (այդ թվում՝ Հավելված N 2-ի 5-րդ կետում նշված ակնկալվող արդյունքները)	կատարման ժամկետները	
1	*«Հայոց պետականության հիմնախնդիրները հնագույն ժամանակներից մինչև 1918 թ.»*	• Հայ ժողովրդի ձևավորումը և կազմավորումը Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներում • Հայոց հին պետականությունների պատմություն (մ.թ.ա հնագույն ժամանակներից մինչև 4-րդ դար) • Հայոց միջնադարյան պետականությունների պատմություն • Հայ ազատագրական պայքարը հին և միջնադարյան Հայաստանում • Ազատագրական պայքարը և Հայ Առաքելական եկեղեցին • Հայոց պետականությունը և Հայ Առաքելական եկեղեցին		թեզիս, հոդված, ժողովածու, մենագրություն		87695.5

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով*

		• Հայ ազգային-ազատագրական շարժումները 17- 20-րդ դարի սկզբին • Հայ քաղաքական կուսակցությունների պատմություն (19-րդ դարի վերջ-20-րդ դարի սկիզբ) • Կիլիկիահայության պատմության հիմնահարցեր • Հայոց զինուժի, հայկական բանակի պատմություն • Ժողովրդագրական գործընթացների ուսումնասիրություն				
2	*«Հայաստանը և հայությունը նորագույն շրջանում: Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն»*	• Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում 1878-1923 թթ. • Կիլիկիահայության պատմության հիմնահարցեր • Հայաստանի առաջին Հանրապետության պատմություն (1918-1920 թթ.) • Խորհրդային Հայաստանի պատմություն (1920-1991թթ.) • Հայ ժողովրդի մասնակցությունը 2-րդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներին (1939-1945թթ.)		թեզիս, հոդված, ժողովածու, մենագրություն		71955.3

		• Հայ գաղթավայրերի և Հայկական սփյուռքի հիմնախնդիրներ • Հայ հասարակական մտքի և հայ պարբերական մամուլի պատմություն • Հայաստանի երրորդ Հանրապետություն պատմություն • Արցախյան ազգային-ազատագրական պայքարի և ԼՂՀ կազմավորման պատմություն • Հայոց զինուժի, հայկական բանակի պատմություն • Ժողովրդագրական գործընթացների ուսումնասիրություն				
3	*«Աղբյուրագիտություն և պատմագրություն»*	Ներկայացված ծրագիրը բաղկացած է երկու թեմաներից՝ ա/աղբյուրագիտություն և բ/ պատմագրություն		թեզիս, հոդված, ժողովածու, մենագրություն:		65209.5
Ընդամենը						*224.860.300*

Կազմակերպության տնօրեն _____ Ա. Մելքոնյան

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ Ա. Մելքոնյան

Հավելված N 4
«26» 01 20.22
N Ե-19 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

««Հայոց պետականության հիմնախնդիրները հնագույն ժամանակներից մինչև 1918 թ.», «Հայաստանը և հայությունը նորագույն շրջանում: Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն», «Աղբյուրագիտություն և պատմագրություն»» ծրագրի

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	203360.3	*40672.1*	*50840.1*	*50840.1*	*61008.0*
2	տնտեսական և այլ ծախսեր	21500.0	*4300.0*	*5375.0*	*5375.0*	*6450.0*
ԸՆԴԱՄԵՆԸ		224860.3	*44972.1*	*56215.1*	*56215.1*	*67458.0*

Կազմակերպության տնօրեն՝ _____ Ա. Մելքոնյան

Կազմակերպության
գլխավոր հաշվապահ՝ _____ Կ. Ստեփանյան

Կ.Տ.

«16» 01 20.22

Հավելված N 4.1
N Ե-19 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ՝

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	9881.0
	էլեկտրաէներգիայի ծառայություն	*4200.0*
	գազի ծառայություն	*3500.0*
	ջրամատակարարման ծառայություն	*710.0*
	կապի ծառայություն	*1300.0*
	աղբահանություն	*171.0*
2	Գույք	655.0
3	Սարքեր և սարքավորումներ	3100.6
4	Նյութեր	2790.0
5	Գործուղումներ	1500.0
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	700.0
7	Արշավախմբեր	
8	Հրատարակման ծախսեր	500.0
	Այլ ծառայությունների ձեռքբերում	2373.4
Ընդամենը		21500.0

Կազմակերպության տնօրեն՝ _____ Ա. Մելքոնյան

Կազմակերպության
գլխավոր հաշվապահ՝ _____ Կ. Ստեփանյան

Կ.Տ.

---

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում*

Հավելված N 5
«26» 01 2022
N Ե-19 պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Հայոց պետականության հիմնախնդիրները հնագույն ժամանակներից մինչև 1918 թ.», «Հայաստանը և հայությունը նորագույն շրջանում: Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն», «Աղբյուրագիտություն և պատմագրություն»» ծրագրի

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Ամսական աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը (հազար դրամ)
1.	Մելքոնյան Աշոտ	տնօրեն	ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս	400 0
2.	Խաչատրյան Կարեն	փոխտնօրեն	Պ գ դ	300 0
3.	Մուրադյան Հակոբ	գիտ քարտուղար	Պ գ թ	290 0
4.	Ստեփանյան Կարինե	գլխ հաշվապահ		245 0
5.	Սահակյան Ռուբեն	բաժնի վարիչ	Պ գ դ	349 9
6.	Ստեփանյան Գևորգ	բաժնի վարիչ	Պ գ դ	349 9
7.	Խառատյան Ալբերտ	բաժնի վարիչ	Պ գ դ	349 9
8.	Շահնազարյան Արտաշես	բաժնի վարիչ	Պ գ թ	349 9
9.	Մարուքյան Արմեն	բաժնի վարիչ	Պ գ դ	349 9
10.	Վարդումյան Գոհար	բաժնի վարիչ	Պ գ թ	349 9
11.	Մելքոնյան Աշոտ	բաժնի վարիչ	Պ գ դ	174 9
12.	Հարությունյան Կլիմենտ	գլխ. գիտաշխ.	Պ գ դ	339 5
13.	Խուդինյան Գևորգ	առաջ. գիտաշխ.	Պ գ դ	212 5
14.	Հակոբյան Արարատ	առաջ գիտաշխ.	Պ գ դ	250 0
15.	Մախմուրյան Գայանե	առաջ. գիտաշխ.	Պ գ դ	250 0
16.	Մելիքյան Վահան	առաջ. գիտաշխ.	Պ գ դ	68 8
17.	Մարգարյան Երվանդ	առաջ. գիտաշխ.	Պ գ դ	66 3
18.	Սարգսյան Սուրեն	առաջ. գիտաշխ.	Պ գ դ	250 0
19.	Ավագյան Քնարիկ	առաջ. գիտաշխ.	Պ գ թ	250 0
20.	Տեր-Ղևոնդյան Վահան	առաջ. գիտաշխ.	Պ գ դ	62 5
21.	Թունյան Վալերի	առաջ. գիտաշխ.	Պ գ դ	62 5
22.	Հովսեփյան Մարիամ	ավագ գիտաշխ.	Պ գ թ	199 7
23.	Գասպարյան Դավիթ	առաջ. գիտաշխ.	Պ գ դ	187 5
24.	Խաչատրյան Կարեն	առաջ. գիտաշխ.	Պ գ դ	125 0
25.	Վարդանյան Գուրգեն	ավագ գիտաշխ.	Պ գ թ	199 7
26.	Հովհաննիսյան Գեղամ	ավագ գիտաշխ.	Պ գ թ	199 7
27.	Ղամբարյան Արմենուհի	ավագ գիտաշխ.	Պ գ թ	99 9
28.	Կարապետյան Արմեն	ավագ գիտաշխ.	Պ գ թ	199 7
29.	Հայրապետյան Արմեն	ավագ գիտաշխ.	Պ գ թ	99 9
30.	Հովհաննիսյան Լիլիթ	ավագ գիտաշխ.	Պ գ թ	199 7
31.	Զաքարյան Լիլիթ	ավագ գիտաշխ.	Պ գ թ	99 9
32.	Ղարիբջանյան Ստեփան	ավագ գիտաշխ.	Պ գ թ	199 7
33.	Մաղալյան Արտակ	ավագ գիտաշխ.	Պ գ թ	199 7
34.	Գևորգյան Զոհրաբ	ավագ գիտաշխ.	Պ գ թ	199 7
35.	Բախչինյան Արծվի	ավագ գիտաշխ.	Պ գ թ	199 7
36.	Վարդանյան Արգիշտի	ավագ գիտաշխ.	Պ գ թ	99 9
37.	Սմիրջանյան Հասմիկ	ավագ գիտաշխ.	Պ գ թ	199 7
38.	Ալեքսանյան Հովհաննես	ավագ գիտաշխ.	Պ գ թ	99 9
39.	Ավետիսյան Սուրեն Ռ.	ավագ գիտաշխ.	Պ գ թ	99 9

40. Սուքիասյան Համո	ավագ գիտաշխ.	Պ. գ. թ	99.9
41. Բաբլումյան Արփինե	ավագ գիտաշխ.	Պ. գ. թ.	199.7
42. Դանիելյան Մկրտիչ	ավագ գիտաշխ.	Պ. գ. թ.	199.7
43. Օհանեան Սեդա	գիտաշատ.	Պ. գ. թ.	150.1
44. Ֆչնկջյան Անի	գիտաշատ.	Պ. գ. թ.	150.1
45. Սարգսյան Վահե	գիտաշատ.	Պ. գ. թ.	150.1
46. Հարությունյան Մարինե	ավագ գիտաշխ.	Պ. գ. թ.	199.7
47. Սայիյան Արամ	գիտաշատ.	Պ. գ. թ.	150.1
48. Եսոյան Մյասնիկ	ավագ գիտաշխ.	Պ. գ. թ.	149.8
49. Ազիզբեկյան Ռուբեն	ավագ գիտաշխ. Պաշտ.	Պ. գ. թ.	99.9
50. Մուրադյան Հակոբ	ավագ գիտաշխ.	Պ. գ. թ.	99.9
51. Երանոսյան Նարինե	գիտաշատ.	Պ. գ. թ.	150.1
52. Շահիդանովա Կարինե	գիտաշատ.	Պ. գ. թ.	112.6
53. Թորոսյան Վահե	գիտաշխ.	Պ. գ. թ.	75.1
54. Ղարախանյան Վահրամ	գիտաշխ.	Պ. գ. թ.	112.6
55. Թաջիրյան Էլիզաբեթ	գիտաշխ.		150.1
56. Թոխաթյան Կարեն	գիտաշխ.	Պ. գ. թ	150.1
	գիտաշխ.		150.1
57. Գրիգորյան Մարիամ	գիտաշատ.	Պ. գ. թ.	150.1
58. Ժամհարյան Գագիկ	գիտաշխ.	Պ. գ. թ.	75.1
59. Գրիգորյան Սարգիս	գիտաշատ.	Պ. գ. թ.	75.1
60. Մկրտչյան Կարեն	գիտաշատ.	Պ. գ. թ.	150.1
61. Բաղալյան Արմեն	գիտաշատ.	Պ. գ. թ.	150.1
62. Պետոյան Ստյոպա	ավագ լաբ.		54.9
63. Մուշեղյան/Թադևոսյան/Անահիտ	գիտաշատ.		150.1
64. Քոսյան Լիլիթ	կրտս.գիտ.		119.7
65. Նազարյան Լիաննա	գիտաշատ. Պածտ.	Պ. գ. թ.	150.1
66. Պլուզյան /Գինոսյան/ Նաիրա	գիտաշատ.	Պ. գ. թ.	112.6
67. Խուդանյան Հարություն	կրտս. գիտաշխ.		119.7
68. Սարգսյան Վահե	կրտս. գիտաշխ.		59.9
69. Խաչատրյան Հենրիկ	գիտաշատ. Պածտ.	Պ. գ. թ.	150.1
70. Ադամյան Նինետա	կրտս. գիտաշխ.		119.7
71. Խաչատրյան Ալեքսանդր	կրտս. գիտ.	Պ. գ. թ.	59.9
72. Շախկյան Գայանե	ավագ լաբ.		109.8
73. Կոնինյան Մանե	կրտս. գիտաշխ.		119.7
74. Երանոսյան Մանյակ	ավագ լաբ.		109.8
75. Մովսիսյան Նարինե	ավագ լաբ.		109.8
76. Ղազարյան Աստղիկ	ավագ լաբ.		109.8
77. Ղազարյան Գայանե	կրտս. գիտ.		119.7
78. Թամարյան Ջենի	կրտս. գիտ.		119.7
79. Շագոյան Անահիտ	ավագ լաբ.		109.8
80. Հարությունյան Նարինե	ավագ լաբ.		109.8
81. Ազատյան Շավարշ	կրտս. գիտաշխ.		119.7
82. Դաղայան Էդիտա	ավագ լաբ.		109.7
83. Դաղայան Էդիտա	Տնօրենի օգն.		52.0
84. Բալայան Գալյա	ավագ տեսուչ		132.0
85. Ալեքսանյան Անուշ	*հաշվապահ*		60.0
86. Խաչատրյան Մանվել	*տնտ. մասի վարիչ*		144.0
87. Շահմանյան Հասմիկ	տեխնիկ		100.0
88. Սուքիասյան Թամարա	համակ. օպերոր		96.0
89. Մուշեղյան Կարեն	համակ.օպերատոր		94.0
90. Բարթիկյան Նունե	տեխն.խմբագիր		77.0
91. Սարգսյան Հասմիկ	գրադարանավար		106.0
92. Իսկանդարյան Ազնիվ	գրադարանավար		100.0

93. Սուրադյան Լևոն	*տեխնիկ*		119.0
94. Պողոսյան Անահիտ	տեխնիկ		119.0
95. Բարսեղյան Գագիկ	*պահակ*		117.0
96. Սանուկյան Գևորգ	փականագործ		45.6
97. Գրիգորյան Սուսաննա	հավաքարար		90.0
98. Միրզոյան Իրինա	հավաքարար		90.0
99. Հովսեփյան Հովհաննես	էլեկտրիկ		47.7
100. Կարապետյան Արմեն	էլեկտրոմեխանիկ		45.6
101. Հովհաննիսյան Ռոզա	հավաքարար		93.3
102. Մաքևոսյան Արմենուհի	հավաքարար		45.6

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ Աշոտ Մելքոնյան

Կազմակերպության անձնակազմի կառավարման բաժնի պետ՝ _____ Գալյա Բալայան

Կ.S.